

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

2000թ. հունվարին Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը կազմել է 35122.0 մլն.դրամ և 1999թ. հունվարի համեմատ դրա աճի տեմպը կազմել է 99.6 տոկոս: Դրա հետ մեկտեղ, գրանցվել է արդյունաբերության (5,7 տոկոսային կետով) և շինարարության (38,7 տոկոսային կետով) ճյուղերում արտադրանքի թողարկման նվազեցում: Հարկ է նշել, որ տնտեսության բազային մնացած ճյուղերում արձանագրվել է արտադրանքի աճ: Այսպես, գյուղատնտեսության ճյուղի արտադրանքի աճի տեմպը կազմել է 101.9 տոկոս, առևտրում և հանրային սննդում՝ 115.0 տոկոս և տրանսպորտի ու կապի ճյուղում՝ 111.0 տոկոս: